ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5330-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
30.10. 2026թ.
հ. 5330 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Արմեն Սարգսյան	Դ. Անհաղթի փողոց, հ.14/4 շենք, հ.103	բնակարան	Արմեն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, Դ. Անհաղթի փողոցի հ.14/4 շենքի հ.103 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.11052026-01-0150, ընդհ. բաժն. 1.22քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 48.68քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Դ. Անհաղթի փողոց, հ.14/4 շենք, բն.103/1	01123JUGKJ2P	
2	Սերոբ Խաչատրյան	Բեռնակիրների փողոց, հ.64	բնակելի տուն	Բեռնակիրների փողոցի հ.64 հասցեում գտնվող բնակելի տանը /հիմք ըստ օրենքի ժառանգության իրավունքի 16.10.2026թ. հ.1989 վկայագիր, վկ. հ.22082024-01-0013/ տրամադրել հասցե՝ Բեռնակիրների փողոց, հ.14	010536SXYAH9	
3	Համլետ Ղարիբյան և Ալվինա Հովնանյան	Ք. Քըրքորյան փողոց, հ.23/2 շենք, 3-րդ մասնաշենք, հ.88	բնակարան	Համլետ Ղարիբյանին և Ալվինա Հովնանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ք. Քըրքորյան փողոցի հ.23/2 շենքի 3-րդ մասնաշենքի հ.88 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.30012026-01-0396, ընդհ. բաժն. 3.55քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 60.41քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ք. Քըրքորյան փողոց, հ.23/2 շենք, 3-րդ մասնաշենք, բն.88/1	01073ZK8QLYX	
4	Հայկ Թադևոսյան /լիազորված անձ/ Ռուբեն Շախմուրադյան /սեփականատեր/	Աշտարակի խճուղի, հ.18/2	հողամաս	Ռուբեն Շախմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող, Աշտարակի խճուղու հ.18/2 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.17092026-01-0347/ բաժանման հատակագծով առանձնացվող 2679.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Աշտարակի խճուղի, հ.18/6	01043W5UJBUF	

5	Ալեքսան Ստեփանյան	Կ. Հալաբյան փողոց, հ.20/16 շենք, հ.131	բնակարան	Ալեքսան Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, Կ. Հալաբյան փողոցի հ.20/16 շենքի հ.131 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.13082026-01-0310, ընդհ. բաժն. 1.2քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 62.5քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Կ. Հալաբյան փողոց, հ.20/16 շենք, բն.131/1	01013AGKZEXH	
6	Անահիտ Հակոբյան	Էրեբունու 3-րդ այգետարածք, 8-րդ տեղամաս, հ.27	հողամաս	Անշարժ գույքի վաճառքի 13.10.2026թ. պայմանագրով Անահիտ Հակոբյանի կողմից ձեռք բերված, Էրեբունու 3-րդ այգետարածքի 8-րդ տեղամասի հ.27 հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Էրեբունի այգեգործական տարածք, 3-րդ զանգված, հ.8/27	01053LMNGEXG	
7	Յուրա Եղիկյան /լիազորված անձ/ Գայանե Օհանյան /սեփականատեր/	Նուբարաշենի 4-րդ փողոց, հ.20	հողամաս	Գայանե Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող, Նուբարաշենի 4-րդ փողոցի հ.20 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.04062026-01-0457/ բաժանման հատակագծով առանձնացվող 403.75քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նուբարաշեն 4-րդ փողոց, հ.20/9	01103MR3T9BX	
8	Ռոզա Դանիլյան, Արեգ և Արմեն Մինասյաններ	Հ. Հակոբյան փողոց, հ.2 շենք, հ.30	բնակարան	Ռոզա Դանիլյանին, Արեգ և Արմեն Մինասյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Հ. Հակոբյան փողոցի հ.2 շենքի հ.30 հասցեում գտնվող բնակարանին /վկ. հ.13072021-01-0192/ տրամադրել հասցե՝ Հ. Հակոբյան փողոց, հ.2 շենք, բն.30/1	01033DUMVBJA	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**